



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ՀՕՄ-Ի ՆՈՐԾՆՏԻՐ ՃՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԱՇԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Երեքաբթի, 10 Օգոստոսի երեկոյեան, Թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. S. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը ՀՕՄի Վրեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան Ներկայացուցիչներուն: Ծանօթ է, որ նոր կազմը ընտրուած էր ՀՕՄի պատգամաւորական ժողովին, որ տեղի ունեցաւ Յուլիս 15-ին 17-ին, Ֆրեզնոյի մէջ: Պատուիրակութիւնը կը բաղկանար Տիկին Արուսեակ Մելքոնեանէ (ատենապետ), Օր. Նայիրի Տերտերեանէ (փոխ ատենապետ), Օր. Ռիթա Յինդեանէ (ատենադպիր), Տիկնայք Զրիսթին Քէշիշեանէ, Սեղա Յակոբեանէ եւ Զարմէն Լիպարիտեանէ: Յանդիպումին Ներկայ Եղան Կրօնական ժողովի ատենապետ Գերա. S. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, Ազգ. Վարչութեան ատենապետուի Տիկին Ռողոսեան եւ անդամ Տիար Սագօ Շիրիքեան:

Յիւր պատուիրակները, ծանօթացում ետք, շնորհակալութեան խօսք ուղղեցին Առաջնորդ Սրբազնին, որ, ինչպէս նախընթաց տարիներուն, այս տարի եւս անձամբ ներկայ Եղած էր պատգամաւորական ժողովին, կատարած էր բացումը եւ ուղղած իր պատգամը: Անոնք ընդհանուր գիծերու մէջ խօսեցան ՀՕՄի Շրջ. Վարչութեան ծրագիրներուն մասին, որոնք խորքին մէջ մաս պիտի կազմեն ՀՕՄի Երկրորդ դարը բացող աշխատանքներուն: Խորհրդակցութեան Նիւթ Եղան ՀՕՄի ծառայութեան դաշտերը, որոնք կը տարածուին սփիւրքեան գաղութներն մինչեւ մայր հայրենիք՝ Հայաստան, Արցախ եւ Զաւախը:

Առաջնորդ Սրբազնը բարձր գնահատեց կնոշական այս մէծ կազմակերպութեան նուիրեալ աշխատանքն ու գործունեութիւնը, մաղթելով, որ յառաջիկայ տարիները առիթ ըլլան ո՛չ միայն ՀՕՄի գործունեութեան դաշտերուն ընդարձակման, այլ նաեւ մէր ազգային Երազներուն իրականացման, առաջադրանքներ՝ որոնց աղերսակից է ՀՕՄը՝ իր բոլոր մակարդակի վարչութիւններով ու բազմահազար անդամներով: Ան նկատել տուաւ, որ Ս. Վթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոսին կողմէ 2010ը Հայ Կնոջ Տարի հիշակումը իւրայատուկ իմաստ կը զգեսու ՀՕՄի գործունեութեան դիտանկիւնն:

Ողջոյնի խօսք ուղղեց նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետութի Տիկին Ռիմա Պողոսեան, գևահատակը արձանագրելով ՀՕՄի Եւ անդամներու ազգանուեր աշխատակրթուն մասին:

Յրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազնը յատուկ յուշանուերներ յանձնեց հիւր պատուիրակներուն:

## **ARS NEW REGIONAL EXECUTIVE MEMBERS VISIT THE PRELACY**

On Tuesday, August 10<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed members of the new ARS Regional Executive, which was elected at the General Assembly held from July 15-17 in Fresno.

The delegation was comprised of Mrs. Arousyak Melkonian (Chair), Ms. Nairi Derderian (Vice-Chair), Ms. Rigtia Hintlian (Secretary), Mrs. Christine Keshishian, Mrs. Seta Hagopian, and Mrs. Carmen Libaridian. Joining the Prelate at the meeting were Very Rev. Fr. Muron Aznikian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian, and Executive Council member Mr. Sako Shirikian.

The delegation expressed their thanks to the Prelate for presiding over the opening of the General Assembly and conveying his message to the delegates, then gave a general overview of the endeavors the ARS will be undertaking as they begin their second century of service.

The Prelate highly commended the devotion and service of all the volunteers of the ARS, and wished unprecedented successes for the organization in the coming years. Mrs. Boghossian also took the opportunity to convey her commendation of the ARS and its members for the services they provide to Armenians worldwide.

At the conclusion of the meeting the Prelate presented each of the guests with mementos in celebration of the Year of the Armenian Woman.